ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «21» մայիսի 2013 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 14 Ա/Ք

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության» 12-րդ կետի 4-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ

1. Հաստատել «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2013 թ. մայիսի 21-ի
N 14-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետև՝ Կազմակերպություն) ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգը:

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական հատկացումներ նախատեսվում է իրականացնել միայն մրցութային կարգով՝ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է Կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ներկայացված հայտերի (այսուհետև՝ Հայտ) ընտրության և հաստատման մրցույթ (այսուհետև՝ Մրցույթ):

3. Կոմիտեի նախագահի հրամանով հաստատվում է Մրցույթի մասին հայտարարությունը, որը հրապարակվում է զանգվածային լրատվությամբ, ինչպես նաև տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական կայքում՝ Հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

4. Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է Հայտերի գնահատման հանձնաժողով (այսուհետև՝ Հանձնաժողով), որի մեջ մտնում են Կոմիտեի նախագահը (նախագահ), Կազմակերպությունների ներկայացուցիչներ, Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության վարչության (այսուհետև՝ Վարչություն) պետը (քարտուղար):

5. Հայտերը ստանալուց հետո Վարչությունը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է դրանց տեխնիկական ստուգում՝ անհրաժեշտության դեպքում վերադարձնելով լրամշակման, համակարգում է դրանք և տրամադրում Հանձնաժողովին:

6. Հայտում հիմնավորվում է տվյալ սարքի կամ սարքավորման անհրաժեշտությունը Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար և տրվում տեղեկություններ՝ Կազմակերպությունում սարքի կամ սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների առկայության մասին:

7. Հանձնաժողովը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Հայտերի գնահատման գործընթացը:

8. Հայտերի գնահատման ժամանակ նախապատվություն տրվում է այն Հայտին, որում.

1) առկա է արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորող կողմ՝ ըստ համաֆինանսավորման ծավալների,

2) գիտական սարքը կամ սարքավորումը առաջարկվում է մի քանի Կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման համար:

9. Համատեղ օգտագործման գիտական սարքի կամ սարքավորման ձեռքբերման համար Հայտ ներկայացվում է այն Կազմակերպության կողմից, որտեղ սարքը կամ սարքավորումը տեղակայվելու է: Հայտատու Կազմակերպության (այսուհետև՝ Կազմակերպություն I) կողմից ներկայացված Հայտին կցվում է առնվազն մեկ շահագրգիռ Կազմակերպության (այսուհետև՝ Կազմակերպություն II) հիմնավորումը՝ Կազմակերպություն II-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության համար այդ սարքի կամ սարքավորման անհրաժեշտության մասին:

10. Հանձնաժողովի գնահատման արդյունքների հիման վրա Վարչությունը ձևավորում է Հայտերի վարկանիշային ցանկ և ներկայացնում Կոմիտեի նախագահի հաստատմանը:

11. Հավասար միավորների դեպքում նախապատվություն տրվում է այն Հայտին, որում շահագրգիռ Կազմակերպությունների (Կազմակերպություն II, Կազմակերպություն III և այլն) թիվը մեծ է, իսկ վերջիններիս հավասարության դեպքում, Հանձնաժողովը կազմակերպում է այց Կազմակերպություն I՝ տեղում ծանոթանալու դրա նյութատեխնիկական բազայի վիճակին և համապատասխան

մասնագետների առկայությանը: Դրանից հետո միայն կայացվում է համապատասխան որոշում:

12. Կոմիտեի նախագահը, ելնելով տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար նախատեսված հատկացումների չափից, հաստատում է գնման ենթակա սարքերի և սարքավորումների ցանկը:

13. Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժինը, հիմք ընդունելով Կոմիտեի նախագահի հրամանը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կազմակերպում է սարքերի և սարքավորումների գնման գործընթացը: